ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 7

20.10.2021թ. կնքված N ՏԿԵՆ-ՄԱ-ԾՁԲ-2021/15Հ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի

ք. Երևան «15» «06» **2023թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ա. Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Քարտաշյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 20.10.2021թ. կնքված N **ՏԿԵՆ-ՄԱ-ԾՁԲ-2021/15Հ** պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5, 7.13 կետերը և ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 1-ի N 880-Ն որոշումը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին՝

1.1 Սահմանել, որ Մ-3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ97+020-կմ104+700 հատվածի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունները մատուցվելու են 2023թ.-ին շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց:

1.2 Հաստատել Համաձայնագրի 2023 թվականի վճարման ժամանակացույցը՝ համաձայն Հավելված 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3,	ՀՀ ք. Երևան, Աճառյան 54բ, 0040
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011002632	Հ/Հ 2050022451291001
ՀՎՀՀ 02815457	ՀՎՀՀ 00813453
Գլխավոր քարտուղար	Տնօրեն
Ա. Երիցյան	Դ. Քարտաշյան
ստորագրություն	ստորագրություն
Կ.Տ.	Կ.Տ.

Հաստատված է
N ՏԿԵՆ-ՄԱ-ԾՁԲ-2021/15Հ գնման պայմանագրի
«15» «06» 2023թ. կնքված
Թիվ 7 Համաձայնագրով
Հավելված թիվ 1

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Մ-3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ97+020-կմ104+700 հատվածի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների

(ՀՀդրամ)

Հրավերով նախատես-ված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսվա ծմիջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգմ ան (CPV)	Գնման ենթակա ծառայություններ ի անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
2	98111140/99	Հեղինակային հսկողության ծառայություններ	---	---	---	---	---	---	1 581 281	1 581 281	1 581 281	2 182 500	2 182 500	2 182 500	**2 182 500**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011002632
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Աճառյան 54բ, 0040
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022451291001
ՀՎՀՀ 00813453
Տնօրեն
Դ. Քարտաշյան

/ստորագրություն/